



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ  
ՆՇԱՆԱՆ

No 831-Ա/2

26.08.2016թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ  
ՊԱՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել հանրակրթական հիմնական դպրոցի 7-րդ դասարանի «Ազգային երգ ու պար» առարկայի փորձնական ծրագիրը՝ համաձայն Հավելվածի:
2. Փորձնական ծրագիրն իրականացնող դպրոցներում «Ազգային երգ ու պար» առարկային հատկացնել շաբաթական 1,5 դասաժամ (տարեկան 51 դասաժամ), որը դպրոցը կարող է տրամադրել «Ֆիզկուլտուրա» առարկային հատկացված դասաժամերից (1 ժամ) և/կամ դպրոցական բաղադրիչից:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

Հանրակրթական հիմնական դպրոցի  
«Ազգային երգ ու պար» առարկայի  
/7-րդ դասարան, 51 ժամ/

**Թեմա 1.** Ներածություն /1 ժամ/

Թեմայի բովանդակությունը

Պարերի տարատեսակները: Պարերի դասակարգումն ըստ ձևերի և կառուցվածքի: Ծիսական, պաշտամունքային, աշխատանքային, մեհենական, ռազմական պարեր, կատարման առանձնահատկությունները :

**Թեմա 2.** Աշխատանքային պարեր և պարերգեր /10 ժամ/

Թեմայի բովանդակությունը

Աշխատանքային պարերի և պարերգերի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կենցաղում, կատարման վայրը, տարածաշրջանային առանձնահատկությունները: Ուսուցանվող պարերի ծագումնաբանությունը, պարաքայլերի ուսուցում, կատարման տեխնիկան: Ուսուցանվող երգերի բառային տեքստը, բովանդակությունը, իմաստը: Պարերգերի շարժումների և բառային տեքստի ամբողջական համադրությունը:

Ուսուցանվող պարեր և պարերգեր	Ուսուցանվող երգեր
<ul style="list-style-type: none"><li>Մայրոքե</li></ul>	<ul style="list-style-type: none"><li>Մայրոքե</li><li>Խիո Խանե/ Տնեն իլար</li></ul>

**Թեմա 3.** Ծիսական պարեր և պարերգեր/17 ժամ/

Թեմայի բովանդակությունը

Ծիսական պարերի և պարերգերի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կենցաղում, կատարման վայրը, տարածաշրջանային առանձնահատկությունները: Ուսուցանվող պարերի ծագումնաբանությունը, պարաքայլերի ուսուցում, կատարման տեխնիկան: Ուսուցանվող երգերի բառային տեքստը, բովանդակությունը, իմաստը: Պարերգերի շարժումների և բառային տեքստի ամբողջական համադրությունը:

Ուսուցանվող պարեր և պարերգեր	Ուսուցանվող երգեր
------------------------------	-------------------

<ul style="list-style-type: none"> <li>• Գորանի</li> <li>• Ֆնջան</li> <li>• Պուդուդի-Ջամբարամի</li> <li>• Լիկիլի</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Գորանի</li> <li>• Պուդուդի</li> <li>• Լիկիլի</li> </ul>
---	--

**Թեմա 6.** Ռազմական և մեհենական պարեր /12 ժամ/

Թեմայի բովանդակությունը

Ռազմական և մեհենական պարերի և դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում, պարերի կատարման վայրը, տարածաշրջանային առանձնահատկությունները: Ուսուցանվող պարերի ծագումնաբանությունը, պարաքայլերի ուսուցում, կատարման տեխնիկան: Ռազմահայրենասիրական երգեր:

Ուսուցանվող պարեր	Ուսուցանվող երգեր
<ul style="list-style-type: none"> <li>• Շատախի ռազմապար/ Լորկե</li> <li>• Իշխանաց պար</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Չուր եփ մնամ/ Զարթիր լսո</li> </ul>

**Թեմա 5.** Կոմիտաս /10 ժամ/

Թեմայի բովանդակությունը

Հայոց բնապաշտության դարաշրջանից եկած ավանդույթներն ու շաղկապվածությունը մեր ավանդական մշակույթի հետ: Պաշտամունքային մշակութային շերտի վերապրուքները հայ ավանդական մշակույթում: Թռչունների պաշտամունքի ազդեցությունը հայկական մշակույթի ավանդական շերտի վրա: Կոմիտասի դերը ազգային պարերի և երգերի գրառման գործում: Կոմիտասի գրառած Շորոր պարի շարժողական տեքստի առանձնահատկություններն ու նշանակությունները:

Ուսուցանվող պարեր	Ուսուցանվող երգեր
<ul style="list-style-type: none"> <li>• Կոմիտասի շորոր</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Հով արեք սարեր ջան</li> <li>• Հոլ արա եզո</li> </ul>

**Թեմա 6.** Ամփոփում/1 ժամ/

Թեմայի բովանդակությունը

Ազգային պարը՝ որպես ազգային արժեհամակարգի ձևավորման և աշակերտների դաստիարակության վրա սկզբունքային ազդեցություն ունեցող գործոն: Անցած նյութի ընդհանուր վերլուծություն: